«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ 1921 թվականի Փետրվարյան ապստամբությունը Հայաստանում

ԱՌԱՐԿԱ՝ Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ՝ պատմական գիտությունների թեկնածու
Կարապետ Հակոբյան

ՄԱՐԶ՝ Կոտայք

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Հրազդանի Անանիա Շիրակացու անվան N 6 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3
1921 թվականի Փետրվարյան ապստամբությունը Հայաստանում ---------- 4
Եզրակացություն ---------- 18
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ ---------- 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել 1921 թ. Փետրվարյան ապստամբության պատճառները, ընթացքն ու հետևանքները: Ի՞նչու Հ. Յ. Դաշնակցությունը, որ խաղաղ ձևով 1920 թ. դեկտեմբերի 2-ին կամավոր հեռացել էր իշխանությունից՝ այն հանձնելով Հայաստանի Հեղկոմին, երկու ամիս անց փորձեց հետ վերադարձնել այդ իշխանությունը՝ շատ լավ գիտակցելով, որ այն երկար պահել չի կարող, արդյո՞ք ժողովուրդը աջակցում էր Հ. Յ. Դաշնակցությանը, Երևանում իշխանությունը վերցնելուց հետո ինչպիսի՞ քայլերի դիմեց Հայրենիքի Փրկության կոմիտեն, արդյո՞ք նրա բոլոր քայլերն էին հանուն հայության փրկության, թե՞ կային որոշումներ, որոնք ոչ մի ձև չեն արդարացվում, իսկ միգուցե այն խռովությո՞ւն կամ արկածախնդրությո՞ւն էր, ինչպես այն բնորոշում են խորհրդահայ պատմաբանները, իսկ միգուցե՝ ոչ: Ահա, այս հարցերի պատասխաններն ենք փորձել տալ՝ ուսումնասիրելով Հայոց Նորագույն պատմության առանցքային էջերից մեկը՝ 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը:

1921 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանում Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության (ՌԽՖՍՀ) ներկայացուցիչ Բորիս Լեգրանի միջև մի կողմից և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարության ներկայացուցիչներ Դրաստամատ Կանայանի (Դրո) և Համբարձում Տերտերյանի միջև մյուս կողմից Երևանում ստորագրվեց համաձայնագիր: Համաձայանգիրը բաղկացած էր ութ հոդվածներից: Համաձայն այդ համաձայնագրի՝ 1. Հայաստանը հայտարարվում էր անկախ խորհրդային սոցիալիստական հանրապետություն, 2. Հայաստանում ամբողջ իշխանությունը անցնում էր Ռազմա-հեղափոխական կոմիտեին (ՌՀԿ), 3. ՀԽՍՀ կազմի մեջ անվիճելիորեն մտնում էին Երևանի նահանգը, Կարսի մարզի մի մասը, Զանգեզուրի գավառը, Ղազախի գավառի մի մասը և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանին էին պատկանում մինչև 1920 թ. հոկտեմբերի 23-ը: 4. Հայկական բանակի հրամանատարական կազմը ազատվում էր պատասխանատվությունից մինչև Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատումը կատարած գործողություն-ների համար: 5. Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ) և Հայաստանի մյուս կուսակցությունների անդամները որևէ բռնաճնշման չպետք է ենթարկվեին իրենց կուսակցական պատկանելիության համար: 6. ՌՀԿ-ի կազմի մեջ էին մտնում հինգ անդամներ, այդ թվում՝ երկու ձախ դաշնակցականներ: 7. Համաձայնագիրը ստորագրելուց հետո Հայաստանի կառավարությունը հեռանում էր իշխանությունից, այն ժամանակավորապես՝ մինչև Հեղկոմի ժամանումը, անցնում էր զինվորական հրամանատարությանը, որը հանձնվում էր Դրոյին, իսկ Հայաստանի զորահրամանա-տարությանը կից ՌԽՖՍՀ-ի կողմից կոմիսար էր նշանակվում Օ. Սիլինը[1]:

Բայց, վերցնելով իշխանությունը, Հայաստանի Հեղկոմը անմիջապես դիմեց ոչնչով չարդարացված քաղաքական բռնաճնշումների: Այսպես, 1920 թ. դեկտեմբերի 2-ին Բորիս Լեգրանը հեռագրով հաղորդում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահ Սերգո (Գրիգորի) Օրջոնիկիձեին, որ ինքը կարգադրել է ձերբակալել Հայաստանի նախկին վարչապետ Համո Օհանջանյանի կառավարության անդամներ Սարգիս Արարատյանին, Արտաշես Չիլինգարյանին (Ռուբեն Դարբինյան), բժիշկ Տեր-Միքայելյանին, Ռուբեն Տեր-Մինասյանին, Գևորգ Ղազարյանին և Արշակ Ջամալյանին: Ձերբակալվելու էին նաև նահանգային կոմիսար Բենը, խմբապետ Համազասպը

[1] Տե՛ս Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թվականներին, Երևան, 2003, էջ 388, ամբողջական տարբերակը տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի հանրապետություն, Երևան, 1993, էջ 533-534:

(Սրվանձտյան), քաղաքական ոստիկանության պետ Լևոն Քալանթարյանը, արտակարգ դատարանի քննիչ Ղասաբյանը, սպեցիֆիկ Բախշի Իշխանյանը և ուրիշներ[2]:

Հանձարարվում էր քաղաքացիական և զինվորական բոլոր իշխանություններին և Հայաստանի բոլոր քաղաքացիներին՝ ամեն կերպ աջակցել ձերբակալություններին, իսկ խանգարողները կպատժվեն հեղափոխական ժամանակների օրենքով[3]:

Հայհեղկոմը, որը Երևան ժամանեց դեկտեմբերի 3-ի, լույս 4-ի գիշերը, իր հերթին կոպտորեն խախտեց Երևանի համաձայնագրի մյուս կետերը՝ Ոչ մի դաշնակցական Հեղկոմի կազմում չմտցվեց, սկսվեցին բռնաճնշումները Հայկական բանակի հրամկազմի և քաղաքական տարբեր կուսակցությունների անդամների նկատմամբ:

1920 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստան ժամանեց Չեկան (Արտակարգ հանձնաժողով) ու սկսվեց ձերբակալությունների նոր փուլը: Բանտարկվեցին նախկին վարչապետ Համո Օհանջանյանը, նախկին նախարար Ռուբեն Դարբինյանը, խորհրդարանի անդամներ բժիշկ Հ. Տեր-Դավթյանը, Վահան Նավասարդյանը, Վ. Բաբայանը, Գ. Վարշամյանը, Երևանի քաղաքային խորհրդի անդամ Արշալույս Աստվածատրյանը, սոցիալ-դեմոկրատ Բախշի Իշխանյանը, խմբապետ Համազասպը և ուրիշներ: Շատ չանցած բանտարկվեցին նաև խորհրդարանի նախագահ Ավետիս Սահակյանը (Հայր Աբրահամ), բժիշկ Հ. Տեր-Միքայելյանը, խորհրդարանի անդամ, բժիշկ Ա. Ղազարյանը և ուրիշներ[4]:

Դեկտեմբերի վերջին արձանագրության ենթարկվեցին հայկական բանակի բոլոր սպաները և 70 սպաներ աքսորվեցին Բաքու:

1921 թ. հունվարի 10-ին իր զինակից սպաների հետ Ռուսաստան աքսորվեց Դրոն:

Հունվարի 24-ին Ռուսաստան աքսորվեցին Հայաստանի բանակի ևս 1200 սպաներ, որոնց թվում էին սպարապետ Թովմաս Նազարբեկյանը, զորավարներ Մովսես Սիլիկյանը, Հովհաննես Հախվերդյանը, Ղամազյանը: Բանտարկյալները պահվում էին անտանելի պայմաններում, գնդակահարության մշտական սպառնալիքի տակ[5]:

Համաձայն Սիմոն Վրացյանի վկայության, Հայաստանի բոլոր կողմերում խուզարկություններ և ձերբակալություններ տեղի ունեցան: Հայաստանի բանտերը բերնեբերան լցվեցին կալանավորներով: Ձերբակալվեցին նաև գրող, հասարակական գործիչ Լևոն Շանթը (Լևոն Սեղբոսյան), Հովհաննես Քաջազնունին (Ռուբեն Իգիթխանյան), Նիկոլ Աղբալյանը, Երևանի քաղաքագլուխ Մ. Մուսինյանը և ուրիշներ[6]:

---

[2] Տե՛ս Գևորգյան Է., Կարապետյան Մ., Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին, Երևան, 2007, էջ 31-32:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 32:
[4] Տե՛ս Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 543:
[5] Տե՛ս նույն տեղում:
[6] Տե՛ս նույն տեղում:

Հետաքրքրական է այն փաստը, որ այս անհիմն ձերբակալությունները չեն հերքել նաև իրենք՝ բոլշևիկյան ղեկավարները: Այսպես, Հայաստանի Հեղկոմի անդամ Ավիս Նուրիջանյանը Ադրբեջանում ՀԿ(բ)Կ ներկայացուցիչ Սարգսի հետ հեռախոսազրույցում նշում է. «Ամբողջ Հայաստանում կատարվում են մաուզերիստների ուժեղ ձերբակալություններ: Կառավարության հինգ անդամներին մենք ձերբակալել ենք Երևան ժամանելու առաջին իսկ օրերին...»[7]: Այս առումով հետաքրքիր է նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյին ուղղված ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1921 թ. հունվարի 27-ի թվակիր նամակը, որտեղ մասնավորապես ասվում է. «բանտարկել և մեկուսացնել բոլոր դաշնակցականներին, կենտրոնական ու գավառային դաշնակցական կազմակերպությունների բոլոր անդամներին, դատախազության աշխատողներին և պահեստի միլիցիայի անդամներին՝ դաշնակցական «օխրանկան»»[8]: Իսկ, որ բացի դաշնակցականներից ձերբակալվել են նաև բազմաթիվ անմեղ մարդիկ, այդ մասին վկայում է արդեն Հայհեղկոմի մեկ այլ անդամ՝ Ասքանազ Մռավյանը: 1921 թ. մարտի 9-ի թվակիր նամակում նա այդ մասին գրում է. «Մեր իշխանության մեջ վերջին օրերը նշանավորվեցին դաշնակցականների զանգվածային բանտարկություններով: Երևանում նրանցից ձերբակալվեց ավելի քան 200 մարդ: Հայաստանի մյուս բնակավայրերում նույնն էր՝ բանտարկում էին տասնյակներով, հարյուրներով, հաճախ անմեղներին, անվնաս մարդկանց»[9]:

Միևնույն ժամանակ ամբողջ երկրում կատարվում էին «անկանոն և անհաշիվ բռնագրավումներ: Գրավում էին ամեն ինչ՝ բնակարան, կարասիներ, հագուստ, սնունդ, ձի, տավար, հավ ու հավկիթ, մինչև իսկ թել ու ասեղ»[10]:

Այդ մասին ՀՅԴ ղեկավար գործիչ, ՀՀ նախկին վարչապետ և արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանը գրում է. «Պահեստներից կ'հանեին պաշարները եւ կ'ուղարկեին Ռուսաստան իբրեւ «նուեր Լենինին Հայաստանից»: Ժողովուրդը կը մատնուէր յուսահատութեան»[11]:

Խորհրդահայ պետական գործիչ Բագրատ Բորյանի վկայությամբ «Հեղկոմը բռնագրավում և պետականացնում էր ամեն ինչ՝ զինվորական հագուստներ, արհեստավորների գործիքներ, մասնավոր և ամեն տեսակ բրնձի աղորիներ, անխտիր բոլոր ջրաղացները, սափրիչի գործիքներ, մեղվի փեթակներ, սպիտակեղեն, հագուստ,

[7] Հ. Յ. Դաշնակցությունը և Խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող՝ Վլ. Ղազախեցյան, Երևան, 1999, էջ 13:
[8] Նույն տեղում, էջ 14:
[9] Նույն տեղում, էջ 18:
[10] Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 543-544:
[11] Խատիսեան Ալ., Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 326:

քաղաքացիների տան կահ-կարասիները, առանց նկատի ունենալու նրանց դասակարգային վիճակը»[12]:

Այս բոլոր բռնությունները ժողովրդի տարբեր խավերի նկատմամբ առաջացնում է ժողովրդի բուռն դժգոհությունը: Ինչպես իրավացիորեն գրում է Ալեքսանդր Խատիսյանը. «Բոլշեւիկեան ներխուժումը ժողովրդի մասնաւոր կեանքի բոլոր անկիւնները զայրույթ պատճառեց նոյնիսկ անոնց, որոնք քաղաքականութեան հետ ոչ մի առնչութիւն չունեին»[13]:

Այս ամենին պետք է ավելացնել նաև այն, որ Հայհեղկոմը ձախողվեց նաև արտաքին քաղաքականության ասպարեզում: Բոլշևիկները «խոստացել էին Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո վերականգնել հարաբերությունները արտաքին աշխարհի հետ, Ռուսաստանից բերել «հաց և մանուֆակտուրա», կարգավորել հարևանների հետ հողային վեճերը և Ռուսաստանի օգնությամբ բարի դրացիական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ»[14]: Բայց, այս խոստումներից ոչ մեկը չիրականացավ: Խորհրդային Ռուսաստանը ինքն էր հայտնվել սովի ճիրաններում և բնականաբար չէր կարող հացով օգնել Խորհրդային Հայաստանին: Վրաստանը, չնայած Հայհեղկոմի բազմաթիվ խնդրանքներին և սպառնալիքներին, շարունակում էր փակ պահել հայ-վրացական սահմանը և «Բաթումի պահեստներում դիզված հայկական պարենն ու ապրանքները տեղից չշարժվեցին»[15]: Ղարաբաղը մնաց Ադրբեջանի ձեռքում, իսկ Նախիջևանում իշխանությունը գտնվում էր թուրքերի ձեռքին: Թուրքական արևելյան բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրն էլ իր հերթին ոչ միայն հրաժարվում էր թուրքական զորքերից դատարկել Ալեքսանդրապոլի գավառը, այլև շարունակում էր թալան ու սպանություններ իրականացնել հայկական շրջաններում[16]:

Այս ամենն ի վերջո հանգեցրին ժողովրդական զինված ապստամբության: Նախ գավառներում ստեղծվեցին գաղտնի խմբակներ, որոնց գլուխ անցան բանտարկությունից խուսափած ՀՅԴ խմբապետներն ու զինվորականները:

Զինված ելույթի առաջին փորձը տեղի ունեցավ 1921 թ. հունվարի 22-ին Բաշ-Գյառնիում (Գառնի) գնդապետ Կուռո Թարխանյանի (Սպարապետ Սուրեն) գլխավորությամբ: Նա Դրոյի կողմից նշանակվել էր Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ, ՀՅԴ ղեկավար գործիչների կողմից ստեղծված

[12] Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 544:
[13] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 326:
[14] Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 547:
[15] Նույն տեղում:
[16] Տե՛ս նույն տեղում, էջ 550:

ընդհատակյա «Հայաստանի կոմիտեի» անդամ էր[17] և նշանակվել էր ապստամբության մասնակից բոլոր ուժերի հրամանատար: Գրավելով Բաշ-Գյառնին՝ ապստամբները փորձեցին շարժվել Երևանի վրա, սակայն, այդ ելույթը մի քանի օրում ճնշվեց: Չնայած դրան՝ Կարմիր բանակի ուժերին հրամայվեց վերադառնալ Երևան, որից էլ օգտվելով՝ Բաշ-Գյառնիում կենտրոնացվեցին դաշնակցության հիմնական ուժերը, և այն դարձավ ապստամբության շտաբը[18]:

1921 թ. փետրվարի սկզբին Լեռնահայաստանի (Զանգեզուր) սպարապետ Գարեգին Նժդեհի (Գարեգին Տեր-Հարությունյան) հրամանով մի խումբ զինակիցներով Զանգեզուրից Բաշ-Գյառնի է անցնում խմբապետ Մարտիրոսը (Մարտիրոս Աբրահամյան): Հակախորհրդային ուժերի թիվը հասնում է 5000 մարդու[19]:

Փետրվարի 13-ին Զառ գյուղում հրավիրվում է ապստամբների խորհրդակցություն: Այստեղ որոշվում է ապստամբությունը սկսել փետրվարի 16-ի, լույս 17-ի գիշերը և այդ մասին տեղեկացվում է Երևանի, Զանգիբասարի, Դարաչիչակի (Ծաղկաձոր) և Ալագյազի (Արագած) ղեկավարներին: Ապստամբության ընդհանուր հարամանատար է ընտրվում Կուռո Թարխանյանը, տեղակալ՝ խմբապետ Մարտիրոսը[20]: Իսկ Հայաստանի կոմիտեն վերանվանվում է «Հայրենիքի փրկության կոմիտե»[21]:

Փետրվարի 14-ին Գարեգին Նժդեհի հրամանով Սյունիքի զորամասերը խմբապետներ Յապոնի (Հովհաննես Պարոնյան) և Մեսրոպի գլխավորությամբ հարձակվում են Դարալագյազի (Վայոց ձոր) կարմիր զորքերի վրա: Իսկ արդեն փետրվարի 16-ին ամբողջ Վայոց ձորը գտնվում էր Սյունիքի նժդեհյան ուժերի ձեռքին[22]:

Սա յուրատեսակ ազդանշան է հանդիսանում ապստամբների համար:

Փետրվարի 16-ին ապստամբները գնդապետ Կուռոյի և խմբապետ Մարտիրոսի հրամանատարությամբ Բաշ-Գյառնիից անսպասելի հարձակվում են Կոտայքի շրջանում տեղակայված խորհրդային Կարմիր բանակի վրա, որի հրամանատարն էր Մ. Մոլկաչանովը: Խորհրդային ուժերը նահանջում են Քանաքեռի և Էլարի (այժմ՝ Աբովյան) ուղղությամբ: Ապստամբների 600 հոգուց բաղկացած մեկ այլ ջոկատ հարձակվում է

---

[17] Կազմակերպվել է Երևանում, 1920 թ. դեկտեմբերի 19-ին Սիմոն Վրացյանի, Եփրեմ Սարգսյանի, Հակոբ Տեր-Հակոբյանի (Իրազեկ) նախաձեռնությամբ, սակայն, սկզբնական շրջանում հեղափոխություն անելու մտադրություն չի ունեցել: Այդ մտքին հանգել է 1921 թ. փետրվարի 9-10-ի գիշերային զանգվածային ձերբակալություններից հետո (տե՛ս Վրացան Ս., նշվ. աշխ., էջ 560, տե՛ս նաև Ղազախեցյան Վլ., Հայաստանը 1920-1940 թվականներին, Երևան, 2006, էջ 43):

[18] Տե՛ս Գևորգյան Է., Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 45-46:

[19] Տե՛ս նույն տեղում, էջ 46:

[20] Տե՛ս Փետրուարեան ապստամբութիւնը (բաշգեառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը), գրի առաւ Եր. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, յուլիս, 1956, թիւ 7, էջ 36-38:

[21] Տե՛ս նույն տեղում, էջ 32:

[22] Տե՛ս Գևորգյան Է., Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 47:

Շորբուլաղի ուղղությամբ[23]: Հայաստանի Կարմիր բանակի 2-րդ գնդի զորամասերը ծանր կորուստներ են կրում և նահանջում դեպի Աղբաշ:

Փետրվարի 16-17-ին կռիվները տեղի են ունենում Երևանի մատույցներում, որտեղ Կարմիր բանակի զորամասերը ծանր պարտություն են կրում, իսկ արևմտյան խմբավորման հրամանատար Երմոլենկոն զոհվում է:

Նույն օրերին՝ փետրվարի 16-17-ին Արագածի լանջերից Երևան են շարժվում Թալինի շրջանի ապստամբները, որոնք մեծամասամբ արևմտահայեր էին: Նրանց առաջնորդում էին Սասունցի Մուշեղը (Ավետիսյան), Չոլոն (Հարություն Աբրահամյան), Մորուք Կարոն (Կարապետ Ավոյան), Կարո Սասունին և Ասլան Ստեփանյանը: Նրանք պարտության են մատնում հայկական Կարմիր բանակի 2-րդ բրիգադի զորամասերին և գրավում էջմիածինը (Վաղարշապատ), Աշտարակը և Փարաքարը[24]:

Փետրվարի 17-ի երեկոյան ապստամբները բոլոր կողմերից շրջապատում են Երևանը: Նույն օրը Երևանը գրավելու բոլոր փորձերն անցնում են ապարդյուն:

Փետրվարի 18-ի առավոտյան ուժեղ կռիվներ էին ընթանում արդեն Երևանի փողոցներում: Աշտարակի, էջմիածնի և Քանաքեռի կողմից Երևան են հասնում ապստամբական նորանոր ուժեր: Նույն օրը Կարմիր բանակի զորամասերը 178-րդ գնդի, «Ազատամարտ» և «Մուսայելյան» (նախկին «Վարդան զորավար») զրահագնացքների պաշտպանության տակ սկսեցին նահանջել դեպի Ղամարլու (Արտաշատ): Նրանց հետ էին ՀԿ(բ)Կ Կենտկոմը, Հայհեղկոմը և ՀԽՍՀ մի շարք հիմնարկներ իրենց աշխատակիցներով[25]:

Նույն օրը Կարմիր բանակի ուժերը նահանջեցին Ղամարլու, իսկ հաջորդ օրը՝ փետրվարի 19-ին, ելնելով մարտավարական նկատառումներից, Կարմիր բանակի զորամասերն ամրացան Ղարաբաղլար - Ղաշլու - Բեյուկ Վեդի - Ենգիջա - Կարալար - Քիչիկ - Վեդի գծում[26]:

Հայհեղկոմը, ՀԽՍՀ կառավարական հիմնարկները, Հայկոմկուսի կենտկոմը, զինվորական շտաբը տեղավորվում են Ավշարի գյուղի մոտ կանգնած երկաթուղային վագոններում՝ Երևանից 40 կմ. հարավ-արևելք:

Երևանից նահանջելու նախօրյակին՝ փետրվարի 16-ի, լույս 17-ի գիշերը Հայհեղկոմի հրամանով Երևանի բանտում կացնահարվում են շուրջ 30-40

[23] Մանրամասն տե՛ս Փետրուարեան ապստամբութիւնը (բաշգեառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը), «Հայրենիք» ամսագիր, սեպտեմբեր, 1956, թիւ 9, էջ 49-51:
[24] Տե՛ս Գևորգյան Է., Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 46:
[25] Տե՛ս նույն տեղում, էջ 49:
[26] Տե՛ս նույն տեղում, էջ 49-50:

բանտարկյալներ, այդ թվում՝ խմբապետ Համազասպը, գնդապետ Նիկոլայ Ղորղանյանը, խմբապետ Մակեդոնը, Արտուշ խանը և ուրիշներ[27]:

Փետրվարի 18-ին տարբեր կողմերից Երևան մտան ապստամբական ուժերը՝ Զանգվի կամրջի կողմից Ասլան Ստեփանյանի զորամասը, որը շտապեց դեպի բանտ, Քանաքեռի կողմից՝ գնդապետ Սուրեն Թարիխանյանն իր զորամասով, որի օգնականներն էին Հակոբ Տեր-Հակոբյանը (Իրազեկ) և Եփրեմ Սարգսյանը, բաշգյառնեցի խմբապետ Մարտիրոսի, բուլանըղցի խմբապետ Ղազար Թարխանյանի (Դալի Ղազար), Նորքի կողմից՝ բաշգյառնեցի խմբապետ Խնկոյի (Ասատրյան), Կոնդի կողմից՝ վանեցի Փանոս Ժամհարյանի խմբերը: Ձինված ապստամբների հիմնական մասն արևմտահայեր էին[28]:

Երևան մտած ապստամբներն առաջին հերթին հարձակվեցին բանտի վրա և ազատ արձակեցին կալանավորներին, որոնց թվում էին Հովհաննես Քաջազնունին, Համո Օհանջանյանը, Նիկոլ Աղբալյանը, Լևոն Շանթը և ուրիշներ:

Երևանը գրավելուց հետո Հայաստանի Հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի (Գրուզինյան) նախագահությամբ ստեղծվեց նոր կառավարություն՝ «Հայրենիքի փրկության կոմիտե» անունով: Ս. Վրացյանը նաև արտաքին գործերի, գյուղատնտեսության և պետական գույքերի նախարարն էր: Ձինվորական գործերի վարիչ նշանակվեց Արշակ Հովհաննիսյանը, ներքին գործերի՝ Կարո Սասունին, ելևմտական՝ Համբարձում Տերտերյանը, արդարադատության՝ Արշակ Խոնդկարյանը, պարենավորման՝ Հակոբ Տեր-Հակոբյանը, ապա՝ Վահան Մինախորյանը: Բանակի ընդհանուր հրամանատար նշանակվեց գնդապետ Կուռո Թարխանյանը[29]:

Կազմվեց նաև Վասպուրականի զինվորական մարմին, որի մեջ մտան 1915 թ. Վան-Քաղաքամեջի ինքնապաշտպանության ղեկավար Հայկակ Կոսոյանը, Փանոս Ժամհարյանը, Սամվել Մեսրոպյանը, Արմենակ Մաքսապետյանը և ուրիշներ: Կազմվեց Վասպուրականի զորագունդը Ասլան Ստեփանյանի գլխավորությամբ: Ստեղծվեցին մշեցիների և սասունցիների ջոկատներ[30]:

Փետրվարյան ապստամբությանը արևմտահայերի ակտիվ մասնակցությունը բացատրվում է Խորհրդային Ռուսաստանի թուրքամետ քաղաքականությամբ և Արևմտյան Հայաստանը վերջիններիս նվիրաբերելու պատրաստակամությամբ:

Փետրվարյան ապստամբությանն ակտիվ մասնակցություն ունեցան էսեռները, կադետները (Հայ ժողովրդական կուսակցություն), սպեցիֆիկները (Հայ սոցիալ-

[27] Այդ գիշեր Երևանի բանտում բոլշևիկների կատարած ոճրագործության մասին մանրամասն տե՛ս Իշխանեան Բ., երկու ամիս բոլշեւիկեան բանտում, Գահիրէ, 1924, էջ 157-167:
[28] Տե՛ս Գևորգյան Է., Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 50-51:
[29] Տե՛ս Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 561:
[30] Տե՛ս Գևորգյան Է., Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 51:

դեմոկրատական բանվորական կազմակերպություն), ռամկավարները: Հնչակյաններն այն համարեցին արկածախնդրություն[31]:

Բայց, ապստամբական ուժերին չհաջողվեց ամենուրեք գրավել իշխանությունը: Խորհրդային իշխանությունը պահպանվեց Դավալուլում (Արարատ), Վեդիում, Ղարաքիլիսայում (Վանաձոր, նախկինում՝ Կիրովական), Դիլիջանում, Իջևանում, Շամշադինում, և մենշևիկյան տիրապետությունից ազատագրված Լոռիում:

Հայաստանի հյուսիսային շրջաններում խորհրդային իշխանությունը պահպանելու և ապստամբական ուժերի դեմ պայքար կազմակերպելու նպատակով 1921 թ. փետրվարի 26-ին Դիլիջանում կազմակերպվում է Դիլիջան - Ղարաքիլիսա գավառների ռազմահեղափոխական կոմիտե՝ Չեկայի նախագահ Գևորգ Աթարբեկյանի գլխավորությամբ: Ռազմահեղափոխական կոմիտեի կազմի մեջ էին մտնում նաև Գևորգ Ալիխանյանը, Ասքանազ Մռավյանը, Եղիշե Շամախյանը, Գ. Թովմասյանը և Ա. Պոլյանսկին[32]:

«Հայրենիքի փրկության կոմիտեն» շտապեց պետություններին տեղեկացնել իր հաղթանակի և Հայաստանում խորհրդային իշխանության տապալման մասին: Փետրվարի 18-ի հետ կապված իրադարձությունների վերաբերյալ հեռագրեր ուղարկվեցին մեծ տերությունների մայրաքաղաքներ, Ազգերի լիգային, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությանը՝ խնդրելով «Լենինի և Չիչերինի բարյացակամ միջամտությունը և Հայաստանի ճանաչումը»[33]:

Միաժամանակ հեռագրեր ուղարկվեցին նաև Լոնդոնի և Մոսկվայի կոնֆերանսների մասնակիցներին:

Լոնդոնի կոնֆերանսի Հայաստանի պատվիրակությանն ուղարկված «Զեկուցում-նամակում» Սիմոն Վրացյանը գրում է. «Մենք և թուրքերը ունենք ընդհանուր շահեր, որ ամենայն համերաշխությամբ կարող ենք պաշտպանել ընդհանուր ուժերով… Խորհրդաժողովի որոշումները մեր վերաբերմամբ ընդունելի պիտի լինեն Թուրքիայի համար, ահա մեր պահանջը»[34]:

Մոսկվայի կոնֆերանսին ուղղված մարտի 12-ի հայտագրով Սիմոն Վրացյանն իր կառավարության համար պարտադիր չէր համարում «Հայաստանի Հանրապետության անունից Ալեքսանդր Բեկզադյանի (ՀԽՍՀ արտգործժողկոմ - Կ. Հ.) ձեռքով կնքված բոլոր պայմանագրերը, նաև նրա կողմից հանձն առած բոլոր պարտականությունները»[35]:

---

[31] Տե՛ս նույն տեղում, էջ 52:
[32] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն), հատ. VII, Երևան, 1967, էջ 146:
[33] Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 563:
[34] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 429:
[35] Ղազախեցյան Վլ., նշվ. աշխ., էջ 59:

Ինչ էր սա, եթե ոչ դավաճանություն սեփական ժողովրդի հանդեպ: Չէ, որ առանց այն էլ թուրքական պատվիրակությունն ամեն կերպ փորձում էր խոչընդոտել Մոսկվայի կոնֆերանսին հայկական պատվիրակության մասնակցությանը:

Սիմոն Վրացյանի այս քայլն անտարակույս իր բացասական նշանակությունն է ունեցել ինչպես Լոնդոնի, այնպես էլ Մոսկվայի կոնֆերանսներում Արևմտյան Հայաստանի վիճելի տարածքների հարցն օգուտ Թուրքիայի լուծելու համար:

«Հայրենիքի փրկության կոմիտեն» իր իշխանության ամրապնդման համար հույս ուներ ստանալու մենշևիկյան Վրաստանի և Քեմալական Թուրքիայի օգնությունը: Բայց 1921 թ. փետրվարի 25-ին Վրաստանի խորհրդայնացումով Վրաստանից օգնություն ստանալու հույսը կտրվեց: Ընդհակառակը՝ Վրաստանի խորհրդայնացմամբ այնտեղ գտնվող Կարմիր բանակի ուժերն օգտագործվեցին Փետրվարյան ապստամբությունը ճնշելու նպատակով:

Ինչ վերաբերում է Քեմալական Թուրքիային, ապա Ս. Վրացյանը կապեր հաստատեց Թուրքիայի Արևելյան բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրի Երևանյան ներկայացուցիչ Բեհաեդդին բեյի և վերջինիս միջոցով՝ Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարության հետ:

Ս. Վրացյանը Մուստաֆա Քեմալից խնդրում էր հնարավորինս շուտ 1) Երևան վերադարձնել Թուրքիայում գտնվող հայ ռազմագերիներին, 2) Որոշ պայմաններով հայկական բանակին զենք ու զինամթերք տրամադրել, 3) Հայաստանին զինվորական օժանդակություն ցուցաբերել[36]:

Չնայած Ս. Վրացյանի այս քայլը ոչ մի կերպ հնարավոր չի արդարացնել, բայց նա նույնպիսի բովանդակությամբ դարձյալ մի քանի նամակներ է ուղարկում Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարությանը, բայց Թուրքիայից այդպես էլ ոչ մի օգնություն չի ստացվում, քանի որ վերջիններս չէին վստահում դաշնակցականներին և չէին հավատում նրանց հաջողությանը:

«Հայրենիքի փրկության կոմիտեն» օգնության խնդրանքով դիմում է նաև ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իրանի օգնությանը, բայց, դարձյալ ապարդյուն[37]:

Արդարության համար պետք է նշել, որ Հայաստանի աշխատավոր ժողովուրդը, մասնավորապես արևելահայերը խանդավառված չէին Փետրվարյան ապստամբությամբ: Այսպես, երբ սկսվեց ապստամբությունը, ներքին Ախտայի (Հրազդան) Ռնդամալ (Զրառատ) և Քարվանսարա (Աթարբեկյան) գյուղերի բնակչությունը զինված դիմադրություն ցույց տվեց ապստամբական ուժերին և եռօրյա մարտերից հետո միայն նահանջեց Ելենովկա (Սևան) ու շուրջ 300 հոգի միացան

[36] Տե՛ս Գևորգյան Է., Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 55:
[37] Տե՛ս նույն տեղում, էջ 56:

Կարմիր բանակին: Իսկ Թալինի շրջանի ութ գյուղերի գյուղացիները հրաժարվեցին ապստամբներին կռվող ուժեր տրամադրել: Բռնի մեթոդով Թալինի 8 գուղերից հաջողվում է հավաքագրել ընդամենը 41 հոգու, որից 16-ը ճանապարհին դիմում են փախուստի[38]:

Այժմ համառոտ անդրադառնանք այն ռազմական գործողություններին, որ տեղի ունեցան ապստամբական ուժերի և խորհրդային Կարմիր բանակի զորամասերի միջև:

Փետրվարի 25-ին հայկական Կարմիր բանակի զորամասերն անցան հարձակման: Կատաղի մարտերը շարունակվեցին մինչև մարտի 2-ը: Թեև Կարմիր բանակին հաջողվեց հասնել մինչև Երևանի մատույցները, բայց փոխադարձ կապի բացակայության հետևանքով նրանք չկարողացան ստանալ Ելենովկա հասած 11-րդ Կարմիր բանակի զորամասերի աջակցությունը: Ապստամբական ուժերի ճնշման տակ Կարմիր բանակի զորամասերը նահանջեցին նախկին դիրքերը՝ իրենց հետ տանելով որոշ քանակությամբ ռազմամթերք[39]:

Մարտի 7-ին Երևանի կողմից ապստամբները փորձեցին ճեղքել Կարմիր զորամասերի պաշտպանությունը, բայց հանդիպելով ուժեղ հակահարվածի՝ հետ շպրտվեցին: Մինչև մարտի 25-ը ապստամբներին այլևս չհաջողվեց կազմակերպել շատ թե քիչ նշանակալի հարձակողական որևէ գործողություն: Լավ նախապատրաստվելուց հետո նրանք մարտի 25-ին Երևանի և Դարալագյազի (Վայոց ձոր) կողմից կրկին անցան հարձակման՝ Կարմիր զորամասերի պաշտպանությունը վերջնականապես խորտակելու մտադրությամբ: Բայց այդ փորձերը ևս վերջացան անհաջողությամբ[40]:

Այդ ընթացքում տնտեսական ծանր կացության մեջ հայտնված Վեդիի և Ղամարլուի (Արտաշատ) շրջաններում գործող Կարմիր բանակի զորամասերը հեռագրով օգնություն խնդրեցին 11-րդ կարմիր բանակի ռազմա-հեղափոխական խորհրդից:

1921 թ. մարտի 25-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահ Սերգո (Գրիգորի) Օրջոնիկիձեի հրամանով 11-րդ Կարմիր բանակի ռազմահեղափոխական կոմիտեն ինքնաթիռով հայկական կարմիր բանակի զորամասերին է փոխադրում 47 կգ. (5000 հատ) ոսկի, որով պարենամթերք է ձեռք բերվում[41]:

Մարտի 26-ից բոլոր կողմերից սկսվում է Կարմիր բանակի զորամասերի ուժգին գրոհը Երևանի վրա: Մարտի 26-ին Ելենովկա - Ախտա - Երևան ուղղության Կարմիր բանակի զորամասերը գրավում են Կարաջորան, Նուռնուս, Թիզխարաբ և այլ գյուղեր,

---

[38] Տե՛ս նույն տեղում, էջ 54:
[39] Տե՛ս Հարությունյան Կլ., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Երևան, 2002, էջ 104:
[40] Տե՛ս նույն տեղում, էջ 104-105:
[41] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), հատ. VII, էջ 151-152:

իսկ մարտի 28-30-ին հասնում էլար (Աբովյան): Ուժգին կռիվներ են տեղի ունենում էլար - Արամուս - Գյամրեզ գծում:

Համամլու (Սպիտակ) - Ապարան - Աշտարակ - Երևան ուղղությամբ Կարմիր բանակի զորամասերը գրավում են Ղաչաղան, Վորնթավ և Չոթուր գյուղերը, իսկ մարտի 27-ին, թեժ մարտերից հետո, գրավում են Փամբակի (Սպիտակի) լեռնանցքը: Մարտի 29-ին նրանք մտնում են Ապարան, իսկ ապրիլի 1-ին՝ Աշտարակ[42]:

Ապստամբական ուժերը, որոնք այլևս ի վիճակի չէին դիմադրելու հյուսիսից և հյուսիս-արևմուտքից հարձակվող խորհրդային ուժերին, փորձում են Ղամարլու - Վեդիի շրջանների վրայով անցնել Դարալագյազ, ուստի ուժեղ գրոհ են սկսում այդ ուղղությամբ: Միաժամանակ թիկունքից նոր հարձակում են ձեռնարկում Դարալագյազում գտնվող նժդեհյան ուժերը, բայց այդ գրոհները նույնպես հետ են մղվում:

Երևանի շրջակայքում մղած թեժ մարտերից հետո՝ 1921 թ. ապրիլի 2-ին 11-րդ Կարմիր բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները Քանաքեռի և Աշտարակի կողմից մտան Երևան, իսկ ապրիլի 3-ին կարմիր հեծելազորը մտնում է Էջմիածին: Ապրիլի 4-ին Երևան են մտնում Վեդի - Ղամարլուի շրջանի հայկական Կարմիր բանակի զորամասերը: Ապրիլի 7-ին խորհրդային ուժերը մտնում են Բաշ-Գյառնի, իսկ ապրիլի 8-ից 15-ը՝ Ղարանլուղի (Մարտունի), Բասարգեչարի (Վարդենիս) և Դարալագյազի շրջաններ, որտեղ հաստատվում է խորհրդային իշխանություն[43]:

Ապրիլի 2-ին, երբ խորհրդային զորքերը մտան Երևան, նրանց առաջին գործը նույնպես եղավ բանտերից ազատել «Հայաստանի փրկության կոմիտեի» ձերբակալած կոմունիստներին, որոնց թիվը չէր զիջում փետրվարին Չեկայի կողմից ձերբակալվածների թվին: Բանտարկյալներով լեփ-լեցուն էին Երևանի, Աշտարակի, Էջմիածնի (Վաղարշապատ), Կոտայքի, Ախտայի (Հրազդան), Նոր Բայազետի (Գավառ, նախկինում՝ Կամո) բանտերը: Նրանց համար հաստատված էր նույնքան սոսկալի բանտային ռեժիմ, ինչպիսին Չեկայի բանտարկյալներինն էր[44]:

1921 թ. մարտի 25-ին Սիմոն Վրացյանը բանավոր կարգադրություն է անում «Հայրենիքի փրկության կոմիտեի» արտակարգ հանձնաժողովի նախագահ Արծրունուն (մարտի 19-ին փոխարինել էր Ավետիս Օհանջանյանին) առավել ակտիվ կոմունիստներին և կոմերիտականներին շտապ հանել բանտերից և խիստ հսկողության տակ տեղափոխել Բաշ-Գյառնի: Ընդհանուր թվով 63 «դավաճան» ու «մարդասպան» բանտարկյալներ 150 զինված պահակների ուղեկցությամբ քշվում են Բաշ-Գյառնի,

[42] Տե՛ս Գևորգյան Է., Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 58:
[43] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), հատ. VII, էջ 152-153:
[44] Տե՛ս Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000, էջ 442-443:

որտեղի բանտում նրանք մնացին 6 օր՝ ենթարկվելով ամեն տեսակ զրկանքների ու պատիժների[45]: Նրանց մեծ մասը հետագայում գնդակահարվեցին կամ ոչնչացվեցին[46]:

Խորհրդային զորքերի կողմից Երևանը գրավելուց հետո շուրջ 500 ապստամբ զինվորներ և մոտ 8000 քաղաքացիական անձինք, որոնց թվում էին Հովհաննես Քաջազնունին, Սիմոն Վրացյանը, Նիկոլ Աղբալյանը, Լևոն Շանթը, Ռուբեն Դարբինյանը, Սիրական Տիգրանյանը, ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, երգիծաբան Լեռ Կամսարը և ուրիշներ, բռնեցին Զանգեզուր տանող ճանապարհը[47]:

Խորհրդային իշխանությունից փախչողների մի հոծ զանգված էլ շարժվեց դեպի Մարգարայի կամուրջը՝ Թուրքիա անցնելու համար, սակայն, թուրքերը նրանց չընդունեցին, ուստի նրանք վերադարձան ու ցրվեցին իրենց գյուղերը[48]:

Զանգեզուր նահանջող «Հայրենիքի փրկության կոմիտեն» իր հետ վերցրեց կառավարական արխիվների մի փոքր մասը և պետական գանձը՝ հայկական դրամ ու չեկեր, խորհրդային դրամներ, տարադրամ: Հայկական դրամը կազմում էր 9 միլիարդ 400 միլիոն ռուբլի, խորհրդային դրամները կազմում էին 650 միլիոն ռուբլի, արտասահմանյան վալյուտան՝ դոլլարներ, ֆունտստեռլինգ, ֆրանկներ և այլն[49]:

Միանգամայն ընդունելի է պրոֆեսոր Արամ Սիմոնյանի այն գնահատականը, որ «Փրկության կոմիտեն բարոյական իրավունք չուներ քայքայված ու սոված երկրից դուրս տանելու վերջին միջոցները»[50]:

1921 թ. ապրիլի 6-ին Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը և ռազմժողկոմ Ավիս Նուրիջանյանը, հիշյալ թալանի մասին հեռագրելով Սերգո Օրջոնիկիձեին, որը պատրաստվում էր այցելել Երևան, նրանից խնդրում էր իր հետ Հայաստան բերել առնվազն մեկ միլիարդ խորհրդային ռուբլի[51]:

1921 թ. ապրիլի 17-ին Դիլիջանի խճուղով Երևան եկավ Ս. Օրջոնիկիձեն: Ապրիլի 20-ին նա, Հայհեղկոմի անդամները, 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Հեկկերը և ուրիշներ գնացին Երևանի կենտրոնական բանտ, որն այս անգամ լցվել էր ձերբակալված շուրջ 1000 դաշնակցականներով և ապստամբության այլ մասնակիցներով: Սերգո Օրջոնիկիձեն և նրա ուղեկիցները անձամբ ազատ ածակեցին բոլոր բանտարկյալներին: Բանտի առջև տեղի ունեցած հանրահավաքում Ս. Օրջոնիկիձեն խստորեն քննադատեց Ս. Կասյանի գլխավորած Հայհեղկոմին, որը թույլ էր տվել կոպիտ սխալներ և դրանով իսկ նպաստել Փետրվարյան ապստամբության

---

[45] Տե՛ս նույն տեղում, էջ 443-444:
[46] Մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), հատ. VII, էջ 154:
[47] Տե՛ս Սիմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 444:
[48] Տե՛ս նույն տեղում:
[49] Այդ մասին Ս. Վրացյանի ներկայացրած հաշվետվությունը տե՛ս Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 667-676:
[50] Սիմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 445:
[51] Տե՛ս նույն տեղում:

առաջացմանը: Նույն օրը Հայհեղկոմը քննության առավ Հայաստանի բանակի աքսորված ու բանտարկված սպաների հարցը և որոշում ընդունեց Հայկական բանակի բոլոր նախկին սպաներին ազատել ճամբարներից ու բանտերից: Այդ որոշման մասին հաղորդվեց Մոսկվա: Ապրիլի 22-ին Մոսկվայից ստացվեց պատասխան, որ Ռուսաստան աքսորված հայկական բանակի նախկին սպաներին թույլատրված է վերադառնալ հայրենիք[52]:

1921 թ. մայիսի սկզբին Խորհրդային Հայաստանի պետական ու կուսակցական հիմնարկների աշխատանքներն ամրապնդելու նպատակով ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ Հայաստան են ուղարկվում մի շարք ղեկավար գործիչներ, որոնց թվում էին Ալեքսանդր Մյասնիկյանը (Ալ. Մարտունի), Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյան), Պողոս Մակինցյանը, Արտաշես Կարինյանը, Արամայիս Երզնկյանը և ուրիշներ[53]:

Գալով Հայաստան՝ ղեկավար պաշտոններ զբաղեցնելու մեծ փորձ և հմտություն ունեցող Ալեքսանդր Մյասնիկյանը նշանակվեց Հայհեղկոմի նախագահ: 1921 թ. մայիսի 21-ին Հայհեղկոմը վերակազմվում է ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի, որի նախագահ և ռազմական գործերի կոմիսար է նշանակվում Ալ. Մյասնիկյանը, արտաքին գործերի ժողկոմ՝ Ասքանազ Մռավյանը, ներքին գործերի ժողկոմ՝ Պողոս Մակինցյանը, արդարադատության ժողկոմ՝ Արտաշես Կարինյանը, ժողտնտխորհի նախագահ՝ Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշին)[54]: Միանշանակ փոխվում է վերաբերմունքը ինչպես հայկական բանակի նախկին սպաների, այնպես էլ ՀՅԴ և այլ կուսակցությունների ներկայացուցիչների հանդեպ՝ դառնալով առավել հանդուրժող:

Այս դրական փոփոխություններին նպաստում է ՌԽՖՍՀ ժողկոմխորհի նախագահ Վլադիմիր Լենինի (Ուլյանով) 1921 թ. ապրիլի 14-ի նամակը՝ ուղղված Անդրկովկասի կոմունիստներին: Այդ նամակում Վ. Ի. Լենինը գրում է, որ Անդրկովկասում, որտեղ պայմանները տարբերվում են Ռուսաստանից. «… անհրաժեշտ է ոչ թէ ընդօրինակել մեր (ՌԽՖՍՀ-ի - Կ. Հ.) գործելակերպը, այլ մտածուած կերպով ձեւափոխել այն՝ կոնկրետ պայմանների տարբերութեան կիրառելի եղանակով»[55]:

Միևնույն նամակում Վ. Ի. Լենինը գտնում է, որ անհրաժեշտ է. «Աւելի մեղմութիւն, զգուշութիւն, զիջողութիւն դէպի մանր բուրժուազիան, մտաւորականութիւնն ու, յատկապէս գիւղացիութիւնը…»[56]:

Այս նամակը, որն իր հետ Անդրկովկաս էր բերել Ալեքսանդր Մյասնիկյանը, հիմք հանդիսացավ ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում «Ռազմական

[52] Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 447-449:
[53] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (ՀՍՍՀ ԳԱ հրատ.), հատ. VII, էջ 156-157:
[54] Տե՛ս նույն տեղում, էջ 157:
[55] Լազեան Գ., Հայաստան եւ հայ դատը հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երեւան, 1991, էջ 278:
[56] Նույն տեղում, էջ 280:

կոմունիզմից» անցնելու դեպի «Նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ)», որն, ինչ խոսք, դրական էր ազդելու Հայաստանի հետագա տնտեսական բարգավաճման համար:

Այսպիսով, 1921 թվականի քաղաքացիական կռիվները ավարտվեցին Հայաստանում խորհրդային իշխանության անխուսափելի հաղթանակով, շնորհիվ նրա թիկունքում կանգնած Խորհրդային Ռուսաստանի: Հետաքրքիր է, որ ապստամբության համար հեռանկար չէին տեսնում նաև նրա անմիջական ղեկավարները: Այսպես, Փարիզում գտնվող Հայաստանի Հանրապետության պատվիրակությանն ուղղված 1921 թ. մարտի նամակ-զեկույցում Ս. Վրացյանը գրում է. «Եթե բոլշևիկները ուժեղանան արտաքին օժանդակությունով, իսկ մենք մնանք մենակ, պարտությունը անկասկած է և անխուսափելի»[57]:

Փորձելով տալ Փետրվարյան ապստամբության ընդհանուր գնահատականը՝ պրոֆեսոր Ա. Սիմոնյանը իրավամբ գրում է. «1921 թ. Փետրվարյան ապստամբությունը դժվար է գնահատել միանշանակ: Ընդհանուր առմամբ… ապստամբությունը արդարացի էր, բարոյական, բայց արդյունքների տեսանկյունից՝ անցանկալի»[58]:

Ակադեմիկոս Գալուստ Գալոյանը, ելնելով իրական փաստերից, իրավացիորեն գտնում է, որ Փետրվարյան ապստամբությունը չէր կարող իր բացասական կնիքը չդնել և' Լոնդոնի դաշնակցային խորհրդաժողովի, և' Մոսկվայում այդ օրերին ընթացող ռուս-թուրքական բանակցությունների վրա, երբ շոշափվում էր Հայաստանի հարցը[59]:

Ընդհանուր առմամբ ընդունելի է նաև պրոֆեսոր Վլադիմիր Ղազախեցյանի այն տեսակետը, որ. «1921 թ. փետրվարյան իրադարձությունները քաղաքացիական պատերազմ էին իրենց բնույթով: Այն սկսվել էր տարերայնորեն ծագած ժողովրդական ապստամբությամբ, որի պատճառը Հայաստանում ստեղծված իրադրությունն էր, խորհրդային իշխանության գործադրած բռնությունները…:

Ապստամբների հիմնական խնդիրը յուրայիններին բանտերից ազատելն էր, որպիսին իրագործելուց հետո ապստամբությունը կարելի էր և պետք էր չշարունակել»[60]:

[57] Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 656:
[58] Սիմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 450:
[59] Տե՛ս Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 427-429:
[60] Ղազախեցյան Վլ., նշվ. աշխ., էջ 83:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի վերջո, ամփոփելով 1921 թ. Փետրվարյան ապստամբության պատմությունը, գալիս ենք հետևյալ **եզրակացությունների**՝

1. Հայ կոմունիստները, Հայաստանում իրենց ձեռքը վերցնելով իշխանությունը, հենց սկզբից խախտեցին 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանյան համաձայնագրի բոլոր կետերը՝ ձերբակալելով և աքսորելով հայ բանակի նախկին սպայական անձնակազմին, բանտարկելով աչքի ընկնող դաշնակցական գործիչներին և նրանց համակիրներին, իշխանությունից հեռացնելով Դրոյին և մյուս ձախ դաշնակցականներին:

2. 1920-1921 թթ. ձմռան ընթացքում իշխանությունը իրենց ձեռքը վերցրած կոմունիստները Ռուսաստանից փոխառած «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության փոխարեն Հայաստանում գործադրեցին բռնությունների քաղաքականություն, որը տարածվում էր նաև խաղաղ բնակչության վրա:

3. Այս ամենի արդյունքում Հայաստանում 1921 թ. փետրվարին բռնկվեց ժողովրդական ապստամբություն, որի ղեկավարությունն իրենց ձեռքը վերցրին դեռևս ազատության մեջ գտնվող ՀՅԴ խմբապետներն ու կուսակցական ղեկավար գործիչները:

4. Շնորհիվ այն բանի, որ 11-րդ Կարմիր բանակը դուրս էր եկել Հայաստանից և զբաղված էր Վրաստանի խորհրդայնացմամբ, ապստամբներին հաջողվում է կարճ ժամանակում Հայաստանի մեծ մասում իրենց ձեռքը վերցնել իշխանությունը, որը միանշանակ չի ընդունվում ողջ հայության կողմից:

5. Միանշանակ դավաճանական կարելի է համարել «Հայրենիքի փրկության կոմիտեի» վարած թուրքասեր քաղաքականությունը, երբ կուսակցական կույր ատելությունից դրդված՝ վերջինս ոչ միայն օգնություն էր խնդրում «բարեկամ» Թուրքիայից՝ իր ազգակցի դեմ կռվելու համար, այլև ձախողում էր Լոնդոնում և Մոսկվայում հայ պատվիրակների հայանպաստ քաղաքականությունը:

6. Հայաստանի Կարմիր բանակին ի վերջո հաջողվում է Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի զորամասերի աջակցությամբ տապալել «Հայրենիքի Փրկության կոմիտեի» իշխանությունը Հայաստանում և այնտեղ վերականգնել Խորհրդային իշխանությունը:

7. Միանշանակ դրական պետք է գնահատել 1921 թ. մայիսին Հայհեղկոմի և ՀԽՍՀ կառավարության անդամների փոփոխությունն ու Ալեքսանդր Մյասնիկյանի գլխավորությամբ նոր կառավարության ձևավորումը, ինչպես նաև «Ռազմական

կոմունիզմը» «ՆԷՊ»-ով փոխարինելու որոշումն ու «ՆԷՊ»-ի կենսագործումը Հայաստանում:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Իշխանեան Բ., Երկու ամիս բոլշեւիկեան բանտում, Գահիրէ, 1924, 196 էջ:
2. Լազեան Գ., Հայաստան եւ հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երեւան, «Ադանա», 1991, 435 էջ:
3. Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, 487 էջ:
4. Հ. Յ. Դաշնակցությունը և Խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող՝ Վլ. Ղազախեցյան, Երևան, 1999, 370 էջ:
5. Փետրուարեան ապստամբութիւնը (բաշգեառնեցի խմբապետ Մարտիրոսի յուշերը), գրի առաւ Եր. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1956, թիւ 7, էջ 32-40, թիւ 8, էջ 52-59, թիւ 9, էջ 49-57:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, 539 էջ:
2. Գևորգյան Է., Կարապետյան Մ., Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին, Երևան, 2007, 448 էջ:
3. Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թվականներին, Երևան, 2003, 400 էջ:
4. Հայ ժողովրդի պատմություն (ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն), հատ. VII, Երևան, 1967, 656 էջ:
5. Հարությունյան Կլ., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Երևան, 2002, 272 էջ:
6. Ղազախեցյան Վլ., Հայաստանը 1920-1940 թվականներին, Երևան, 2006, 565 էջ:
7. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000, 672 էջ:
8. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, 704 էջ: